

շրջաբերան մուսիա՝ ըստած կակղա-
միս կենդանին և տեսակ տեսակ ժրժ-
մունքներ։ Եւ ամէն տեսակ կենդա-
նիներէն յայտնի կը տեսնուի որ եր-
րորդ կազմութիւնը անոյշ ջրերէ ձեւ-
ցած է։

Երրորդ կազմութիւնը կրային է,
և ծովու ջրերէ առաջ եկած. ասոր
մէջ կը գտնուին զանազան ծովային
ժժմունքներ և կենդանեաց մնացորդ-
ներ։ Եւ կազմութեան մէջ գտնուած
գործածական հանքերն են քուարց
ու կիրի ածխուտ բերեղացած, և շի-
նուածքի համար կրային քարեր։

Շինգերորդ կազմութիւնը բոլորու-
մին կաւային է և աւազախառն, ու
կը գործածուի հողէ ամաններ շի-
նելու։ Եւ կազմութեան մէջ շատ
կենդանեաց ու բուսոց մարմիններ կը
գտնուին. փայտերէն շատը ածուխի
կերպարանք առած են, շատն ալ ի-
րենց գոյացութենէն քիչ փոխուած.
իսկ ժժմունքներուն յատկութիւննե-
րէն կ'իմացուի որ աս կազմութիւնն
ալ անոյշ ջրերէ ձեւացած է։

Եւ համառօտ տեղեկութեամբ ի-
մացուեցաւ երրորդական հողերուն
կազմութիւնը, և իրենց մասնաւոր յատ-
կութիւնները. հիմանայինք թէ ինչ
պիտուական ու տնտեսուէ մէջ գործ-
ածելու նիւթեր կ'ելեն անոնցմէ։

Եւ ջի գիտնալու բանն աս է որ եր-
րորդական կարգի բաղկացուցիչ հո-
ղերը կրային ու կաւային ըլլալով՝ ի-
րենց մէջէն ծանրագին հանքեր չեն
ելեր. բայց ելած կրաքարերն ալ ի-
րենց ճերմակութեան՝ մաքրութեան
ու ազնուութեանը համեմատ արժէք
ունին. ինչպէս են զանազան տեսակ
մարմարիոնները՝ որ շինուածքներու
և ճարտարապետական զարդերու կը
գործածուին։ Վայլախազի հետ բա-
ղադրած կրաքար, որ աղօրիքներու
կը գործածուի. կոպիճ՝ փողոցները
յատակելու շտկելու համար. քուար-
ցախառն աւազ, որ ապակագործու-

թեան արհեստին գլխաւոր նիւթն է.
տեսակ տեսակ կաւեր՝ որով կը շի-
նուին հողէ պտուկներ ու ազնիւ ա-
մաններ. ակառ, ոփաղ, որ զարդա-
րանքի կը գործածուին. ծովային փր-
փուր՝ որ տեսակ մը մանեղեան քար
է փղոսկրի պէս ճերմակ, ու տնական
բաներու կը գործածուի. կը գտնուի
նաեւ սաթ, ծծումբ և ձիւթ։

ԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

(Դ) Կաւառ։

ԲՆՈՒԹԵԱՆ մէջի ահաւոր երևոյթ-
ներէն մէկն ալ թաթառն է. թա-
թառ՝ կ'ըսուի ան թանձր գոլոր-
շիքներէ ձեւացած սիւնը, որ եր-
բեմն գլանաձև կ'ըլլայ, երբեմն կո-
նոնաձև, և երկրիս կամ ծովուն ե-
րեսէն ինչուան ամպերը կը բարձրա-
նայ. երբեմն անշարժ կը կենայ, եր-
բեմն ալ սոսկալի պտոյտներով տեղէ
տեղ կը փոխուի, դիմացը ինչ որ գայ՝
կ'առնէ վեր կը հանէ, ու յետոյ բար-
ձրէն վար ձգելով ջարդուբուրդ կ'ը-
նէ։ Եւ անկով ծովուն մէջ շատ փնաս-
ներ կ'ընէ ու մեծամեծ նաւեր ալ կը
կոտորտէ. իսկ երկրիս վրայ որ իջնայ՝
խորարմատ ծառերը կը խլէ, մեծամեծ
չէնքերը կը փլցնէ, և արտերն ու
այգիները կ'աւերջտըկէ։ (Դ) Կաւառ եր-
բեմն ալ թաթառները խիստ մեծ
փնասներ չեն ըներ. երբեմն ծառե-
րուն գագաթը կ'իջնան, որով տերե-
ները՝ ճիւղերը իրար կ'անցընեն, եր-
բեմն ծխնելոյզներէն ելած ծուխերուն
վրայ, երբեմն ալ փողոցներու մէջ
իջնալով անոնց փոշին կ'ընցընելով
վեր կը վերցընեն ու ետքը կը ցրուեն։

Բնագէտներէն ոմանք ըսին թէ
թաթառին պատճառը ներհական
հովերն են, որ մէկմէկու դէմ հան-

1 Կաւառ. Cyclostoma mumia.

1 Գ. Է. Écume de mer.

2 Խոբլան. Գ. Գ. Trombe.